դիվանի հետ, և դիվանի մուսթովֆիներից էր կախված, թե նրանց յուրաքանչյուր տարի որտեղ կուղարկեին իրենց ռոճիկն ստանալու: Այդ պարզ երևում է նաև համեսալեի և ռոճիկի թանխահի ֆերմանների համեմատությունից: Եթե թիուլների և համեսալեների նշանակման ֆերմաններում անպայման նշված էր լինում, թե հիշյալ թիուլդարն ու համեսալեդարը իր որոշյալ ռոճիկը ամեն տարի ո՞ր օբյեկտից, ո՞ր գյուղերի համայնքներից, որքա՞նը կանխիկ դրամով և որքա՞նը բնամթերքով պիտի ստանա, ապա ռոճիկի թանխահների նշանակման ֆերմաններում միայն նշվում էր ռոճիկի գումարը և կարգադրվում բարձրագույն դիվանի մուսթովֆիներին, որ այդ ֆերմանը «արձանագրեն իրենց մատյաններում և ամեն տարի այդպիսիների նման նրանց թանխահ տան»[20]: Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ թիուլ և համեսալե ստացողները կոչվում են «թիուլդար» և «համեսալեդար»[21], այնինչ ռոճիկի թանխահ ստացողները «թանխահդարներ» չեն կոչվել: Պետք է եզրակացնել, որ եթե թանխահը թիուլի և համեսալեի նման իր մեջ պարունակեր նաև որևէ օբյեկտից ստացվող հողային և այլ հարկերի որոշյալ ժամանակով գանձման իրավունք ստանալու իմաստը, ապա կարող էր թանխահ տերմինին զուգահեռ գոյություն ունենալ նաև «թանխահդար» տերմինը. մինչդեռ այդպիսի տերմին ոչ պատմական սկզբնաղբյուրներում և ոչ էլ արխիվային փաստաթղթերում մեզ չի հանդիպել և այլ ուսումնասիրողների կողմից ևս չի հիշատակվել:

Դիվանի գյուղերի ցուցակը, ինչպես ասվեց, գրանցված էր հատուկ մատյաններում և գտնվում էր յուրաքանչյուր երկրամասի մեծ վեզերի և մուսթոֆիների տրամադրության տակ: Որքանով որ այդ գյուղերը անհատների կամ կրոնական հաստատությունների սեփականությունը չեն եղել, ուստի դրանց վերաբերյալ իրավական (շար'ի) փաստաթղթեր չեն պահպանվել: Միայն այդ գյուղերից գանձվող հարկերի ավելի մանրամասն աղյուսակներ և այլ փաստաթղթեր անշուշտ գտնվել են վերոհիշյալ դիվանական գրասենյակներում (դավթարխանե-յե դիվան-ե ա'լա) կամ այլ տերմինով ասած «ավարեջեի սարքարությունում» (սարքար-ե ավարեջե=հարկային տեսչություն), որոնք սակայն մեզ չեն հասել[22]:

Այս հանգամանքը հնարավորություն չի տալիս պարզելու նաև, թե ինչպես էին որոշվում առանձին դիվանի գյուղերի ցանքատարածության սահմանները (քյոֆշան): Մուլքային գյուղերի կալվածագրերում սովորաբար հիշատակված են տվյալ գյուղի սահմանները, իսկ դիվանի գյուղերի սահմանների ճշտման վերաբերյալ այդ կարգի վկայություններ չկան, որովհետև նրանք չունեն կալվածագրեր: Պետք է կարծել, որ միմյանց հարևան դիվանի գյուղերի սահմանները որոշվել և ճշտվել են նրանց համայնքների ներկայացուցիչներից կազմված հատուկ հանձնախմբի կողմից, հենվելով հիմնականում ծերունիների վկայության վրա: Մեր ձեռքի տակ կան երկու արժեքա-

---

[20] მაკარ ხუბუა, *21, 28, 46, 74:* در دفتر ثبت نموده و سال بسال بدستور امثال تنخواه دهند

[21] *Նույն տեղում, էջ 32, 34, 56: Հմմտ.* تاریخ شاه عباس ثانی, *Լենինգրադի հանր. գր. Դորնի ցուցակ, № 303, էջ 270 բ, Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 286, թղթ. 1գ, վավ. 251, թղթ. 2ա, վավ. 27 և այլն:*

[22] *Տե՛ս Մատենադարանի պարսկ. վավերագրեր, I, Հրովարտակներ, պր. Բ, կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1959, էջ 212, 217, 218:*